ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

15-ը հունվարի 2021թ.
ժամը 14:40

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲՎ պետի տեղակալ Ա. Մուրադյանը,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲՎ ԿԾԲ առաջատար մասնագետ Վ. Ղազարյանը,
ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲՎ ԿԾԲ գլխավոր մասնագետ Ս. Մարգսյանը:
Գնումները համակարգող՝
ՀՀ ՊՆ ԳԿ վարչության գնումների կազմակերպման 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ Մ. Հոխեյանը:

«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ. Հոխեյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկություններ բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգում ընտրված և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6.Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Մ. Հոխեյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/3» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանում
1	«ՍԼԱՅՔ» ՓԲԸ
2	«ԱՐՄԱՆ ՍՎԱՋՅԱՆ» ԱՁ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Մ. Հոխեյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:
2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Մ. Հոխեյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Չափաբաժնի համարը և չափաբաժնի անվանումը	Ծառայության առավելագույն գումարը /ՀՀ դրամ/	Ծառայությունների միավոր գների հանրագումար /Նախահաշվային արժեքը /ՀՀ դրամ//	ՍԼԱՑՔ ՓԲԸ գինը առանց ԱԱՀ /միավոր գների հանրագումար /ՀՀ դրամ//	Արման Սվազյան ԱՁ գինը առանց ԱԱՀ /միավոր գների հանրագումար /ՀՀ դրամ//
Գեներատորների վերանորոգման և պահպանման ծառայությունների	13 000 000	20 250 180	19 000 000	30 000 000

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 15.01.2021թ.-ին տեղի ունեցած նիստին՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի, ինչպես նաև «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.6 և 8.7 կետերի պահանջները՝ հանձնաժողովը որոշեց 20.01.2021թ. ժամը 15:00-ին՝ ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) հրավերի պահանջներին համապատասխան /բավարար գնահատված/ հայտ ներկայացրած բոլոր մասնակիցներին հրավիրել միաժամանակյա բանակցությունների, իսկ գնումների համակարգողը նույն օրը /15.01.2021թ./ ծանուցեց մասնակիցներին /ՍԼԱՑՔ ՓԲԸ և Արման Սվազյան ԱՁ/՝ կազմակերպվելիք բանակցությունների վերաբերյալ:

20.01.2021թ.-ի, ժ. 15:00-ին՝ տեղի ունեցած բանակցության նիստին՝ ներկայացան ՍԼԱՑՔ ՓԲԸ-ի և Արման Սվազյան ԱՁ կողմից լիազորված անձիք: Բանակցության արդյունքում՝ վերջիններիս կողմից առաջարկված նախնական գները փոխվեցին /նվազեցվեց/, որը ներկայացվում է ստորև.

Չափաբաժնի համարը և չափաբաժնի անվանումը	Ծառայության առավելագույն գումարը /ՀՀ դրամ/	Ծառայությունների միավոր գների հանրագումար /Նախահաշվային արժեքը /ՀՀ դրամ//	ՍԼԱՑՔ ՓԲԸ գինը առանց ԱԱՀ /միավոր գների հանրագումար /ՀՀ դրամ//	Արման Սվազյան ԱՁ գինը առանց ԱԱՀ /միավոր գների հանրագումար /ՀՀ դրամ//	Ընտրված մասնակից
Գեներատորների վերանորոգման և պահպանման ծառայությունների	13 000 000	20 250 180	11 900 000	11 850 000	Արման Սվազյան ԱՁ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգում ընտրված և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Մ. Հոխեյան)

4.1 21.01.2021թ. հիմք ընդունելով «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամների էլեկտրոնային գնահատման արդյունքերը, հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային (ընդհանուր) առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգում ընտրված մասնակից ճանաչվեց՝ Արման Սվազյան ԱՁ-ն, իսկ ՍԼԱՑՔ ՓԲԸ-ն հայտարարվեց հաջորդաբար տեղ զբաղեցնող մասնակից:

4.2 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/3» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/3» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Մ. Հոխեյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ.

(Մ. Հոխեյան)

6.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԵՁԲ-21-10/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Ա. Մուրադյան

Գնահատող Վ. Ղազարյան

Գնահատող Ս. Սարգսյան

Գնումները համակարգող Մ. Հոխեյան